

## Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի գնահատման չափանիշներ

### XII դասարան

1. Հարց- 1-ին ենթահարց՝ 2մ., 2-րդ ենթահարց՝ 2մ.:
2. Հարց- 1-ին ենթահարց՝ 1մ., 2-րդ ենթահարց՝ 1մ., 3-րդ ենթահարց՝ 1մ., 4-րդ ենթահարց՝ 1մ. :
3. Հարց- 1-ին ենթահարց՝ 3մ., 2-րդ ենթահարց՝ 1մ.:
4. Հարց- 1-ին ենթահարց՝ 2մ., 2-րդ ենթահարց՝ 0,5մ, 3-րդ ենթահարց՝ 1,5մ.:
5. Հարց- 1-ին ենթահարց՝ 3մ., 2-րդ ենթահարց՝ 1մ.:

Հ.Գ. Կարևորել հարուստ բառապաշարը, յուրօրինակ վերլուծությունները, ուշադրություն դարձնել ոճական սխալներին՝ յուրաքանչյուրի համար հանելով 0,25մ.: Ռեզուլտատները անդրադառնալ՝ խմբավորելով:

## Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի պատասխաններ

### XII—դասարան

2.Բոլոր գրողները իրենց ստեղծագործության մեջ անմահացրել են իրենց ծննդավայրը, երգել են կարոտի ու սիրո , ափսոսանքի ու հիացումի մրմունջով: 1921-1924թ.թ. Եղիշե Չարենցը գրեց իր « Երկիր Նաիրի» պոեմանման ( Չարենցի բնորոշումն է) վեպը՝ նվիրված իր հայրենի Կարսին:

Կարսն այստեղ իրական քաղաք է՝ իր բնակիչներով, նշանավոր Առաքելոց եկեղեցիով , Վարդանի կամրջով, ճգնավորի մատուռով, որոնք խորհրդավոր մոգականությամբ ու առասպելականությամբ ներկայացնում են քաղաքի կենսագրությունը:

Չարենցի վեպը մեծ հայրենասերի գիրք է՝ գրված կորստյան ցավի ու միացող դառնության շաղախով, մի ներքին զայրույթ ասես պոռթկում է . հոգուց՝ դառնալով այրող հարց « Ի՞նչ ես դու վերջապես Նաիրի, ուղեղային մորմո՞ք, սրտի հիվանդությո՞ւն, ֆիկցիա՞, մի՞Ֆ...»:

Վեպն սկսվում և ավարտվում է Կարս քաղաքի պատկերով: Բոլոր գործող անձանցով հանդերձ վեպի գլխավոր հերոսը Կարսն է՝ իր առասպելական անցյալով և մշուշոտ ներկայով, իրական հայրենիքի երազանքով:

Այստեղ խառնված են հեքիաթն ու իրականությունը. տեսարժան վայրերի նկարագրությամբ երևում է նախընթաց բոլոր սերունդների կյանքի ուղին: Սրտի խորին ցավով Չարենցը հասնում է կործանվող քաղաքի

ավերակներին: Վեպը գրված է սիրող զավակի քնքշությամբ. «Միտելի՛ ընթերցող, թողնում եմ, որ դու... Այո՛, դու գտնես Նահիրին»: Եվ մենք գտնում ենք Նահիրին ու ...կսկիծով փակում այս հրաշալի ասքը Կարսի հերոսական ժողովրդի:

Բակունցի « Կյորես » վիպակը քարտեզագրում է հայրենի գյուղաքաղաքի կորուսյալ ու պահպանված եզերքները: Այն մի Էպիկական ձոն է, դիֆերամբ՝ ուղղված իր պաշտելի ծննդավայրին, բնակիչներին, լեզվին: Կարոտի երգ է հյուսում Բակունցը՝ աչքի առաջ ունենալով առասպելական պատմությունների քողով վարագուրված քաղաքը, որը նրան հիշեցնում է Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ երբ Մինան լվանում էր այն, գույներն ավելի էին պայծառանում, և Մինան լաց էր լինում, ու նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն..

« Այդ լեզու չէր այլ կարոտ, տխրություն, զայրույթ :

Այդպես Ղաթրինի ձորում երգում էր կաքավը, և մթնում կանչում էր Ցուրտ աղբյուրը...

Այնքան գեղեցիկ և հնչեղ էր Կյորեսի լեզուն»:

Գորիսը ներկայանում է Կյորես անունով. Իրար են հակադրվում հին ու նոր բնակավայրերը, բարքերը և անգամ լեզուն:

Ինչպես Չարենցն էր հումորով պատմում իր հերոսների մասին, այնպես էլ Բակունցն է նուրբ, ներողամիտ հումորով նկարագրում հին ու նոր կյորես-գորիսցիներին: Եվ այս ամենը մի տեսակ անանց թախիծով:

Ակամայից հիշում ես Չարենցի «արևահամ բառը», հոգևոր Հայաստանի անկորնչելի պատմությունը:

Եվ պատահական չէ, որ նրանց մյուս տաղանդավոր բանաստեղծ ընկերը իր քաղաքի անզուգական ասքը հյուսելիս բնաբան է ընտրել իր գրչակից ընկերների բնութագրությունները: Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը բնաբան ունի Տերյանից, Չարենցից, Բակունցից. Գրողը խոստովանում է, որ գիրքը գրելու շարժառիթը նաև խանդն է, իր անզուգական ծննդավայրը անմահացնելու խանդը: «Այս գիրքը խանդով գրված գիրք է», - ասում է Գուրգեն խան Մահարին: Խանդը նրա անմացորդ սերն է Վանի ու Այգեստանի երազային օրերի մասին, նրա ժողովրդի, կենցաղի, անչար հումորի, ինքնապաշտպանության և Վանի ողբերգության մասին: Նա մեծ նահիրցու և մեծ կյորեսեցու նման հյուսում է հարազատ քաղաքի ասքը՝ հումորով, երգիծանքով, մի քիչ սարկազմով. Էգեստարի փողոցներում մենք հանդիպում ենք փառահեղ Օհանես Մուրադխանյանին, պարոն Ղևոնդին, Արամ Մանուկյանին, Մխիթարին և այլոց, որոնք մտահոգ են Վանի ճակատագրով: 17 տարի տայգաների անսահմանության մեջ շղթայված նրա հոգին ոչ մի վայրկյան չի մոռացել իր ծննդավայրի շքեղ կենցաղը, հարուստ վանեցիների ժլատությունը, նրանց անկեղծ հեգնանքն ու անսահման ներումն ու մարդասիրությունը: Ու նա անհուն կարոտով հիշում է. «Երբ Վարագա սարից բարձրանում են աղոթարանի առաջին բաց կապույտ ժանյակները, տիրում է լռություն, ուրվականները չքանում են, իսկ դեռ ապրող վանեցիները բռնում են ամեն մեկն իր ճամփան: Նրանք քայլելիս ամբողջ ժամանակ փայլող քարեր են թողնում իրենց հետևից, որպեսզի երբ հնչի ժամերի ժամը, չմոռանան վերադարձի ճանապարհը: Ահա՛ և հեքիաթը: ... Ու եթե պարտադիր է, որ բոլոր հեքիաթների երեք խնձորները ընկնեն, ապա թող Արտամեստի խնձորներ

լինեն դրանք, ու թող իջնեն հեքիաթի երեք խնձորները, ու թող առաջին խնձորը աշխարհի բոլոր կողմերում դեռ ապրող Վանին ու վանեցիներին լինի, նրանց որդիներին ու թոռներին: Ու թող երկրորդ խնձորը մայր հայրենիքի ժողովրդին լինի, որ սիրում է Վանը վանեցու նման և վանեցու սիրով... Իսկ երրորդը...»: Մահարին լռում է, իսկ մենք երրորդ խնձորը տալիս ենք մեր անզուգական հեղինակներին, որոնք հյուսեցին այս հանճարեղ գործերը՝ անմեկնելի թախիծով ու անվերժանելի սիրով:

3.1958-ին Մոսկվայում Սևակը գրում է « Անլռելի զանգակատուն» պոեմը, որը կարող է նաև չափաժողովեալ կոչվել իր ընդգրկումով: « Իմ ամբողջ կյանքում ես տառապել եմ կոմիտասասիրությամբ», - խոստովանել է Սևակը:

Պոեմի կառուցվածքը ըստ կոմիտասյան երգերի է՝ « Անտունի », « Կռունկ », « Սունա յար » :

Կոմիտասի կերպարի մեջ խտացված է մեր ժողովրդի չհասկացված բախտի քմայքը . Կոմիտասի կյանքը հայրենի երգի միջով ճանապարհ է դեպի ժողովուրդը և ժողովրդի ցավի միջով՝ դեպի հեղափոխություն ու ողբերգություն:

Հայրենի երգի մեջ ժողովրդի ամբողջ պատմությունն էր՝ ցավի ու ուրախության թրթիռներով:

« Գործը մտահղացվել է իբրև համանվագ՝ սիմֆոնիա կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրև օրատորիա » - բացատրել է Սևակը:

Պոեմը ծավալվում է համազանգերով ու ղողանջներով:

Ղողանջում են եկեղեցու զանգերը՝ ավետելով հանճարի ծնունդը, որբությունը, երգի քննությունը, այնուհետև ըստ կարգի՝ սերը, հայ ժողովրդի աշխատանքային առօրյան « իսկ որտեղ երգն էր, այնտեղ էլ ինքն էր » : Եվ հայ երգը հանձին Կոմիտասի արժանանում է միջազգային ճանաչման:

Կոմիտաս- ժողովուրդ, ազգային ու անհատական ճակատագրերը ձուլվում են:

Կոմիտասի գործը համարժեք է միայն Մաշտոցի սիրանքին, և պոեմն ավարտվում է այսպիսի տողերով. « Դու մեր երգի Մեսրոպ Մաշտոց,

Գիրն ու տառն ես Հայոց երգի »

Կոմիտասով մի անգամ ևս Սևակը բարձրացրեց Մեծ եղեռնի թեման, որ մինչ այդ արգելված էր: Նա Կոմիտասով ու Կոմիտասի հետ հնչեցրեց մեր ժողովրդի կենաց երգը:

150 տարի առաջ ծնվեցին խոսքի և երգի կախարդները և ապրեցին ու դեռ ապրելու են իրենց ժամանակի հետ հավերժ:

4.Համո Սահյանի սիրո ամենաքնքուշ երգերից է « Չես ասի ոչ մի բառով » աղոթք-տրտունջը;

Բանաստեղծության վերնագիրը սիրո անվերժանելիության, անթարգմանելիության բնութագիրն է:

Բաժանումը ցավ է ու տրտունջ, բողոք է ու ներում, ժպիտ է ու արցունք, բայց դրանք ոչ մի բառով չես կարող արտահայտել: Նա մերթ լաց է լինում,

մերթ ծիծաղում , դու զգում ես ճամփեգրին մուր կանգնած և անելիքը  
չիմացող ըմբոստ համակերպվողի լուռ ցավը: Բաժանման պահը անմեկնելի  
է, և բանաստեղծը արցունքի միջից ծիծաղելով հրաժեշտ է տալիս այն  
միակին, առանց որի կյանքն անիմաստ է Եկար էլ, ի՞նչ իմանամ  
Ա՛խ, նորից « Բարի ճամփա » , Ո՞ւմ մոտ ես վիշտդ լալու:  
Ա՛խ, նորից « մնաս բարով » ...  
Մի տեսակ տագնապ կա, որ  
Չես ասի ոչ մի բառով:  
Գնում ես, չես էլ ասում,  
Թե մեկ էլ ե՞րբ ես գալու,

5.Նաիրի Չարյանի « Արա գեղեցիկ» դիցապատմական ողբերգության  
պատմական հիմքը Քերթողահոր թողած « Արա Գեղեցիկ և Շամիրամ»  
ավանդավեպն է:

Բայց Չարյանը հոգեբանական բուրրովին այլ տեսանկյունից է մոտեցել:  
Խորենացու մոտ Արան չի սիրում Շամիրամին, չի մտածում նրա կախարդիչ  
գեղեցկության մասին, իսկ Չարյանի մոտ նա չի կարողանում սպանել  
գեղեցկությունը, և երկու հակադիր զգացմունքներ ծվատում են նրան:  
Սակայն Շամիրամի անհագուրդ կիրքը՝ նրան տիրելու, անգամ կնոջ  
արժանապատվությունը վիրավորող պահանջը՝ կատարել իր կամքը և  
վերադառնալ, Նվարդի լուռ համակերպումը այն տվայտանքներին,  
զայրացնում է Արային, և նա խիստ պատասխանով հետ է ուղարկում  
Շամիրամի պատգամաբերներին

« Վերադարձե՛ք Ասորեստան և ասացե՛ք Շամիրամին,  
Թե բռնության շնչից սիրո ծաղիկը թառամեց,  
Եվ նրա տեղ աճեց ատելության կաղնին:  
Եվ ասացեք, Արան սիրում է Նուարդին,  
Պատրաստ է պահպանել նրա պատիվն անեղծ:  
Եթե անապատի հեղեղն է հեղեղն է Շամիրամ,  
Նուարդ Յայոց Երասիս է մաքրաջուր:  
Եթե մուլեգնության հրդեհն է Շամիրամ,  
Նուարդ արևն է հեզության ու բազնի հուր:  
Եվ ասացեք, Արան չունի սովորություն  
Գոռոզ ոճին պատասխանել ոճով խոնարհության:  
Ահա ձեզ ոճս, պատասխան բարձրագույն,  
Եվ արդ վերադարձե՛ք Ասորեստան»:

Դիցապատմական ողբերգությունը գրվել է 1944 թվականին: Արայի  
պատասխանը հայ ժողովրդի պատասխանն է ֆաշիստական  
Գերմանիային:Այս երկի տողերը անգիր գիտեին մեր զինվորները. չէ՛ որ մենք  
թաքուն հույս էինք փայփայում մեր կորուսյալ հայրենիքը հետ ստանալու....